

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յայտնի է, որ հայ ժողովուրդը իր քաղաքացիական պատմության ընթացքում անցել է պատմական ահալոր աղետների ու կործանարար փոթորիկների միջով: Հայի անցած ճանապարհը ներկուած է նրա արեամբ: Վկայ՝ Աւարայրն ու Սարդարապատը: Ինչ խօսք, այդ հերոսամարտերն ունեցել են քախտորոշ նշանակութիւն հայ ժողովրդի կեանքում:

Հայաստանին հարեւան Պարսկաստանը միշտ էլ մեծ ախորժակ է ունեցել իր մէջ ձուլելու հարեւան ժողովուրդներին եւ տէր դառնալու նրանց տարածքներին: Նրա այդ նկրտումները ամենից աւելի դրսեւորուել են Հայաստանի նկատմամբ: Եւ այդ պատճառով Պարսկաստանը անընդհատ յարձակումներ է գործել Հայաստանի վրայ: ՅՕ1թ., երբ Գրիգոր Լուսաւորչի ջանքերով Հայոց Թագաւոր Տրդատ Մեծը բրիտանութիւնն ընդունեց որպէս պետական կրօն, դա էլ աւելի բորբոքեց պարսկական արքունիքին, որովհետեւ այն նպատակ ունէր հայերին դարձնել զրադաշտական կրօնը պաշտողներ, այսինքն՝ կրակապաշտներ, եւ դրանով իսկ Հայաստանը վերածել պարսկական մի գաւառի: Դրանից յետոյ պարսիկներն անընդմէջ կռիւներ են մղում հայերի դէմ: Որպէս օրինակ, յիշեմք նրանց մղած կռիւները Հայաստանի դէմ Հայոց Թագաւորներ Խոսրովի, Տիրանի, Արշակ Նրկորդի ժամանակ: Վերջապէս այդ պայքարը հասցնում է նրան, որ Յ87թ. Հայաստանը րաժանում է Պարսկաստանի եւ Բիզանդիայի միջեւ: Բիզանդական մասում եթէ միանգամից վերացում է Հայոց Թագաւորութիւնը, ապա պարսկական

մասում այն պահպանում է կիսանկախ ձեւով մինչեւ 428թ., եւ այդ թուականին Հայոց Թագաւորութիւնը վերացում է նաեւ այդ մասում:

Հայաստանի րաժանումից յետոյ էլ Դամոկլեան սրի նման նոր վտանգ է կախում հայ ժողովրդի գլխին. պարսիկները ձգտում են Հայաստանում տարածել պարսկերէնը: Այդ վտանգի առաջն առնելու համար հարկաւոր էր ունենալ սեփական զին ու գրականութիւն: Ինչպէս մեր տաղանդաւոր րանաստեղծ Պարոյր Սեւակն է ասում. հանճարները «Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, րայց ո՛չ ուշացած. Ծնւում են նրանք նի՛շդ ժամանակին»(1): Զիշտ ժամանակին ծնուեցին նաեւ Ս. Սահակ Պարթեւն ու Ս. Մեսրոպ Մաշտոցը: Հայ ժողովրդի այդ հանճարեղ գաւակներն զգացին, որ հայ ժողովրդին պարսիկների մէջ ձուլելուց փրկելու ամենագորեղ միջոցը հայի ձեռքը հայոց գրերով ու հայոց լեզուով Աւետարան տալն է: Մեսրոպ Մաշտոցի կողմից 405թ. իրականացուած այդ ազգապահպանման մեծ ձեռնարկից յետոյ պարսկական արքունիքը սկսում է վարել հարկային ծանր րադաքանութիւն: Դենշապուհին ուղարկում է Հայաստան, որը աշխարհագիր է անցկացնում եւ աւելացնում հարկերը՝ հարկի տակ դնելով նաեւ հայ հոգեւորականութեանը: Եւ հարկերը, ինչպէս գրում է Նդիշէն, «Առնում էին ո՛չ թէ ինչպէս վայել է պետական արժանապատուութեանը, այլ աւագկարար յափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապէս զարմանում էին, թէ մի տեղից որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպէ՞ս է շէն մնում այդ աշխարհը» (2):

Պարսից արժույթը դրանով էլ չի քաղարարում, եւ Միհրմեքսի գորապետը Հայոց մեծերին նամակ է յղում ու պահանջում, որպէս զի կ'ա՛մ ընդունեն կրակապաշտութիւնը, կ'ա՛մ, եթէ չեն ուզում ընդունել, ներկայանան պարսկական արժույթի: Յովսէփ եպիսկոպոսի գլխաւորութեամբ տասնութ եպիսկոպոսներ հաւաքուում են Արտաշատ քաղաքում եւ պատասխանում այդ նամակին՝ մասնաւորաբար գրելով.

«Այս հաւատից (այսինքն՝ քրիստոնէութիւնից - Գ. Թ.) մեզ ո՛չ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը եւ ո՛չ ջուրը եւ ո՛չ էլ որեւէ այլ դառն հարուած: ...Եթէ (մեզ) այս հաւատի մէջ թողնես, ո՛չ երկրի վրայ ուրիշ տէր կ'ընդունենք քո փոխարէն եւ ո՛չ էլ երկնքում ուրիշ Աստուած կ'ընդունենք Յիսուս Քրիստոսի փոխարէն, որից բացի՝ ուրիշ աստուած չկայ»(3):

Այս պատասխանն ստանալով՝ Պարսից արքան գայրազին նամակ է գրում եւ հայոց տասը նախարարներին անուն առ անուն կանչում արժույթի: Նրանց թւում էին նաեւ Վարդան Մամիկոնեանն ու Վասակ Սիւնեցին: (4)

Պարսկաստանում հայ նախարարներին ստիպում են, որպէս զի նրանք ընդունեն զրադաշտական կրօնը, հակառակ դէպքում նրանց կը տանջեն ու կ'ախորհն Պարսկաստանի խորքերը՝ Սագաստան, Խուժաստան: Հայ նախարարները ստիպուած ընդունում են կեղծ ուրացութեամբ, որպէս զի կարողանան վերադառնալ Հայաստան եւ պատրաստուել ապստամբութեան: Պարսից արքայ Յակոբուս Երկրորդը նրանց հետ Հայաստան է ուղարկում մեծ այրուձի, բազում մոգեր եւ եօթը հարիւրից անլի ուսուցիչներ, որպէս զի նրանք հաւատափոխ անէին հայերին:

Այդ քանը տեսնելով՝ հայ

հոգեւորականները բոլոր հայերին խրատում, քաջալերում ու Քրիստոսի գինուր բն դարձնում: Եւ նրանք միահամուռ կայացնում են հետեւեալ վճիռը. «Հարազատ եղբոր ձեռքը թող քարձրանայ այն մերձաւորի դէմ, որ դուրս է եկել Աստուծոյ պատուիրանի ուխտից. հայրը չի նայի որդուն, եւ որդին չակնածի հօր պատուից: Կինը կռուի իր ամուսնու դէմ, եւ ծառան դիմադրի իր տիրոջը: Աստուածային օրէնքը թագաւորի ամէն քանում»: (5)

Իսկ Ղեւոնդ Երէցը, տակաւին նախարարների մտադրութիւններին անտեղեակ, գաւազաններով ջարդել է տալիս մոգերի ու մոգապետների գլուխները: Այնուհետեւ եկեղեցում կատարում են կիրակնօրեայ պաշտամունքը: Խորհրդի են կանչում նաեւ սպարապետին եւ համոզում, որ նա քնաւ չի թերացել Քրիստոսի սիրուց: (6)

Հաւաքուում է Հայոց գործը եւ քաժանուում երեք մասի՝ Վարդան Մամիկոնեանի, Վասակ Սիւնեցու եւ Ներշապուհի գլխաւորութեամբ: Վասակ Սիւնեցին, իր հետ վերցնելով եօթը նախարարներ իրենց գործերով, գնում է Սիւնիք: Նրանք յետոյ դաւաճանեցին հայերին եւ անցան պարսիկների կողմը:

Վարդան Մամիկոնեանը գնում է Աղուանք եւ այնտեղ ունենում է մեծ յաջողութիւններ. նա նաեւ իր կողմն է գրաւում Հոնքերին: Հայոց մեծ գորավարը յետոյ վերադառնում է Հայաստան եւ սկսում է գործ հաւաքել: Իր գորավարական քացառիկ ընդունակութիւնների եւ քարձր հեղինակութեան շնորհիւ նա իր շուրջն է համախմբում Հայոց հոգեւորականութեանը, նախարարներին ու ժողովրդին, թուով 66 հազար մարդ:(7) Հայոց գործը շարժում է դէպի Աւարայրի դաշտը. գործի հետ էին նաեւ Ս. Յովսէփ Հոդոցմեցի կաթողիկոսն ու Ս. Ղեւոնդ Երէցը:

Վարդան Մամիկոնեանը զօրքի առաջ հանդես է գալիս հայրենասիրական ֆաջակերիչ նառով, որի մէջ մասնաւորապէս ասում է.

«Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ ֆաջ նիգակակիցք իմ. մանաւանդ զի քազումք ի ձեզնէ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, եւ գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. քայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ քաղալի թուեսցին քանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ փոքունց: Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի քազմութենէ հեթանոսացն, եւ մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զգօրութիւն նոցա, զի քարճրացի կողմն նշմարութեան, եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ, քայց միայն յարութիւնս ֆաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք»: (8)

Իր բոցաշունչ նառով զօրքին ոգեւորում է նաեւ Ղեւոնդ Նրէցը՝ յատուկ շեշտելով հաւատքի ու հայրենիքի համար մղուող պայքարում նահատակուած բոլոր նրանց, ովքեր դարձան վերին իմանալի ֆաղափի քնակիչներ ու ժառանգորդներ: (9)

Հայերը, նշանաբան ունենալով «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է» խուարդը, համախմբում են սպարապետի շուրջը եւ դուրս գալիս պատերազմի պարսկական երեսուն քիւրանոց քանակի դէմ, որը ոչ միայն ֆառապատիկ աւելի էր հայոց զօրքից, այլ նաեւ զինուած էր փղերով եւ ռազմական այլ հանդերձանքներով: Վարդան Մամիկոնեանը ֆաջ գիտէր, որ իրենք չեն կարող յաղթել պարսկական մեծաքանակ քանակին, քայց ֆաջաբար անցան Տղմուտ գետը եւ յարձակուեցին Պարսից քանակի

վրայ՝ յանուն հաւատքի ու հայրենիքի:

451 Մայիս 26, ճակատամարտը տեւում է միայն այդ մէկ օրը, եւ երկու կողմից էլ քազմաթիւ մարտիկներ են ընկնում ռազմի դաշտում: Նդիշէն գրում է. «Իսկ կորովի Վարդանն իր ֆաջ նիգակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր եւ հենց ինքն էլ արժանի եղաւ ստանալու կատարեալ նահատակութեան պսակը»: (10) Վարդանի հետ նահատակուեցին ուր մեծ նախարարներ եւս: Հայոց գոհերի ընդհանուր թիւը 1036 էր, պարսիկներինը՝ 3544, որից ինը մեծամեծներից էին: Հայերը չյաղթուեցին. «Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, եւ կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ ֆաջ ընդ ֆաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»: (11)

Աւարայրի ճակատամարտից յետոյ հայերը չկարողացան միասնական ուժերով պատերազմը շարունակել, «որովհետեւ, ինչպէս գրում է Նդիշէն, Հայոց զօրավարն ընկել էր մեծ պատերազմում, այնուհետեւ էլ ոչ ոք գլխաւոր չկար մէջտեղում, որի վրայ յենուած ժողովուէին մնացած զօրքերը» (12): Սակայն Հայոց մարտիկները, ցրուելով տարբեր գաւառներ, վերստին շարունակում էին պայքարը պարսիկների դէմ: Ի վերջոյ պարսիկները չեն կարողանում զսպել հայերի ապստամբութիւնը եւ դիմում են զիջումների՝ հայերին իրաւումք է տրւում ազատ կերպով պաշտելու քրիստոնէութիւնը: Պատերազմի պատճառով քանի որ Հայոց երկիրն աւերուած էր, պարսկական արքունիքը հայերից հարկեր չի վերցնում: Եւ ապա իրենց կալուածքներից հեռացողներին թոյլ է տրւում վերադառնալու եւ տէր կանգնելու իրենց սեփականութեանը: (13)

Վարդանանց պատերազմից յետոյ Հայոց Յովսէփ կաթողիկոսը, Ղեւոնդ Նրէցը եւ մի քանի այլ հոգեւորականներ

շղթայուած տարւում են Պարսկաստան, ուր նրանց երկու-երեք տարի տանջելուց յետոյ նահատակուի են:

Շատ է մեծ Աւարայրի ճակատամարտի նշանակութիւնը հայ ժողովրդի պատմութեան մէջ: Այն առաջին հայրենական պատերազմն էր, որ մղուեց հաւատքի, այն է՝ քրիստոնէութեան պահպանման համար, եւ նրա շնորհիւ էր, որ հայ ժողովուրդը կարողացաւ պահպանել իր կրօնն ու ինքնութիւնը եւ գոյատեւել որպէս ազգ:

Նշելիք էր քաղաքի դէպքերում արտայայտուի է իր վերաբերմունքը հերոսների եւ նկարագրուող իրադարձութիւնների վերաբերեալ: Նա մեծ համակրանքով է խօսում Վարդանի ու նրա կողմնակիցների մասին. Վարդանին բնութագրում է բազմաթիւ բնորոշ մակդիրներով, այսպէս՝ փրին Վարդան, Մեծն Վարդան, Քաջն Վարդան, կորովին Վարդան, առաքինի գորավարն Վարդան: Եւ ելնելով «Միաբանութիւնը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանութիւնը՝ չար գործերի ծնողը» հիմնադրոյթից՝ նա անողորմ քննադատութեան է ենթարկում դաւաճան Վասակ Սիւնեցուն ու նրա կողմնակիցներին, որպէս զի նրանց մասին կարդացողները կամ լսողները նզով կարդան նրանց ետեւից եւ նրանց գործերին ցանկացող չլինեն: (14)

Նշելիք է «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» գիրքը գրուած է ոսկեղենիկ գրաբարով, եւ այն դարեր շարունակ դաստիարակչական մեծ դեր է խաղացել ու շարունակում է խաղալ՝ մեր մատաղ սերունդներին համակելով քրիստոնէութեան նկատմամբ անսասան հաւատով եւ խոր հայրենասիրութեամբ: Եւ գուր չէ, որ հայ մեծ արձակագիր Դերենիկ Դեմիրճեանը Նշելիքի սոյն գրքի հիման վրայ 1940-ական թուականներին ստեղծեց իր հանճարեղ «Վարդանանք» պատմավէպը, որով աւելի

եւս ժողովրդականացրեց Վարդանանց կերպարը:

Վարդանանց հերոսամարտից յետոյ անցել է 1547 տարի: Այսօր նրանց ոգեկոչումն ունի գործնական կարեւոր նշանակութիւն: Այդ եղանակով սերունդները հաղորդակից են դառնում մեր մեծ նախնիների հայրենասիրական գործերին, նրանց առաքինութեանը, աշխատում են նմանուել նրանց, օրինակ առնել նրանցից, եւ դրանով իսկ պահպանել նրանց թողած աւանդները, լինել կրօնի, մայրենի լեզուի, մշակոյթի, ազգային սովորոյթների նախանձախնդիր, եւ միաժամանակ դատապարտել դաւաճանութիւնն ու ուրացութիւնը:

Այժմ աւելի քան երբեւէ շատ մեծ անելիք ունեն հայ եկեղեցին ու հոգեւորականութիւնը ազգապահպանման, այսինքն՝ հային հայ պահելու գործում: Մեր երազած ու նուաճած անկախութիւնից յետոյ տնտեսական ծանր կացութեան պատճառով հարիւր հազարաւոր հայեր արտագաղթեցին Հայաստանից եւ աւելացրին առանց այն էլ ամբողջ աշխարհով մէկ սփռուած հայութեան թիւը: Նրանց հայեցի դաստիարակելու, նրանց մէջ Վարդանանց ու Ղեւոնդեանց ոգին վառ պահելու գործում անուրանալի է հայոց եկեղեցուն եւ նրա հովանաւորութեամբ գործող դպրոցների դերը: Ցաւօք, յաճախ շատ հայեր իրենց կապը խզում են հայոց եկեղեցուց ու դպրոցից, որի հետեւանքով նրանք կամ նրանց սերունդները դադարում են հայ լինելուց: Հանրայայտ իրողութիւն է, որ ամէն մի ազգի համար հիմնական գործօններ են կրօնն ու լեզուն: Մեզանից դեռ եւս մէկուկէս դար առաջ մեր մեծ հայրենասէր գրող Ռաչատուր Աբովեանն իր «Վերք Հայաստանի» վէպում գրել է. «Ա՛խ, լեզուն, լեզուն. լեզուն որ չլի, մարդ ինչի՞ նման կըլի: Մէկ ազգի

պահողը, իրար հետ միացնողը լեզուն աս, ու հաւատը: Լեզուն փոխի՛ր, հաւատդ ուրացի՛ր, էլ ինչո՞վ կարես ասիլ, թէ ո՞ր ազգիցն ես» (15):

Ոչ ոք էլ քնաւ դէմ չէ օտար լեզուներ սովորելուն, որովհետեւ, ինչպէս ժողովրդական առածն է ասում, որքան լեզու գիտես, այնքան մարդ ես: Խնդիրն այն է, որ օտար լեզուն պէտք է սովորել հայերէնի հիման վրայ եւ ոչ թէ հայերէնի հաշուին:

Վարդանանց ու Ղեւոնդեանց ոգին հայ ժողովրդին միշտ ոգեկոչել, փառաբանել, մղել է յաղթանակների: Դրա վառ ապացոյցներից են Աւարայրի, Սարգարապատի հերոսամարտերը, Արցախի այսօրուայ ազատագրական հերոսական պայքարը:

ԱՂԲԻԻՄՆԵՐ

1.- Պարոյր Սեւակ, «Նորից Քեզ Հետ», «Մարդը Ափի Մէջ», «Եղիցի Լոյս», «Մամուլի էջերով» (Հատընտիր), Պէյրուք, 1980, էջ 90:

2.- Տե՛ս «Եղիշէի վարդանանց պատմութիւնը, քարգմանութեամբ եւ ծանօթագրութիւններով պրոֆ. Ե. Տէր-Միմասեանի», Երեւան, 1958, էջ 27-28 (այսուհետեւ՝ Եղիշէ, աշխարհաբար):

3.- Անդ, էջ 40-41:

4.- Անդ, էջ 42:

5.- Անդ, էջ 55:

6.- Անդ, էջ 60:

7.- Անդ, էջ 92:

Վարդաններ ու Ղեւոնդներ միշտ էլ ծնունել են ու դեռ կը ծնունեն, քանի դեռ կայ հայ ժողովուրդը: Ինչպէս որ մեզ միշտ ուղեկցել է նրանց ջահը, թող այսուհետեւ եւս այն լուսաւորի մեր նամբան: Անաղարտ պահեմք նրանց հոգեւոր ժառանգութիւնը եւ այն փոխանցեմք մեր գալիք սերունդներին:

Վարդանանց մասին մեր խօսքն աւարտեմք հայ անուանի քանաստեղծ Վահան Թէքեանի հետեւեալ տողերով.

«Դարերը կ'անցնին՝ քայց Վարդանը Քաջ,

Քայց Վարդանը Սուրբ, կ'երբայ միշտ առաջ...»:

8.- Տե՛ս «Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ քաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Միմասեանի», Երեւան, 1957, էջ 101-102 (այսուհետեւ՝ Եղիշէ, գրաբար):

9.- Անդ, էջ 106-113:

10.- Եղիշէ, աշխարհաբար, էջ 107:

11.- Եղիշէ, գրաբար, էջ 119:

12.- Եղիշէ, աշխարհաբար, էջ 108:

13.- Անդ, էջ 118:

14.- Անդ, էջ 126:

15.- Թեւաւոր խօսքեր (ժողովածու), կազմող՝ Գ. Բ. Թօսունեան Երեւան, 1989, էջ 75:

ԳԵՂՈՐԳ ԹՕՍՈՒՆԵԱՆ